04 AUG 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ՍԱՅՈՒԶՏԱԲԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱԳՐՈՆՈՄ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՏՎՈՒ-ԹՅԱՆ, ՎՈՐԱԿԻ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ

(Ծխախոտագործ ագրոտեխնիկների և բրիգադավարների համար)

633
Գ-95

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

633
Գ-95
22 MAR 2013
18299

Գյուղերատի տպարան
Պատվեր 287
Գլավլիտ 43-01 Տիրաժ 500

ՀԱՅ ԽՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵՆԻՆԻ ԱՆՎ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. Ն. Ա. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԵԿԱՆԻԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆ

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾ ԱԳՐՈՏԵԽՆԻԿՆԵՐԻ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ որ-օրին աճում և զարգանում է սոցիալիստական խոշոր գյուղատնտեսությունը։ Հիմնական կորիզը՝ չքավոր և միջակ գյուղացիությունը ընտիր դասակարգի ոգնությամբ կանգնել են սոց. գյուղատնտեսության զարգացման ուղիի վրա։ Զտնելով արագությամբ Խորհրդային Միությունը մանր, փոշրացած տնտեսություններից անցել է ամենախոշոր հողագործությանը, լայն կիրառելով գյուղատնտեսության մեքենայացումը, կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը և կուլակության արմատական վերացումը, որպես դասակարգի։ Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման պատմության ընթացքում Խ. իշխանությունը կատաղի կերպով հաղթահարել է բոլոր դժվարությունները, կանգ չառնելով վոչ մի խոչընդոտի առաջ,—շնորհիվ կուսակցության գլխավոր դծի կիրառման, պայքարելով հակախորհրդային բոլոր թեքումների դեմ։ Սոցիալիստական գյուղատնտեսության հիմնական խնդիրներից մեկը, վոր կուսակցությունը դնում է մեր առաջ, դա կոլխոզային և սովխոզային դաշտերի բերքատվության և վորակի բարձրացման խնդիրն է, վորն այժմ գտնվում է խանձելի դրության մեջ։ Այս խնդիրն ավելի մեծ նշանակություն է ստանում սոցիալիստական գյուղատ-

ՀԱՅ ԽՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ

տագործության մշակման ասպարիզում, վորտեղ վերջին տարիներում ունեցել ենք մեծ ճեղքվածքներ ու կորուստներ, շնորհիվ վորոշ կոլխոզների անկազմակերպ և անուշադիր աշխատանքի, չկիրառելով ագրոտեխնիկական ձեռնարկումները ծխախոտի մշակման տարբեր պրոցեսներում, վորտեղից և բղխում են անթույլատրելի կորուստներ, վորոնք մի կողմից բացասական են անդրադառնում կոլտնտեսության քաղաքական և տնտեսական ամրապնդման վրա, մյուս կողմից պետական բյուջեյի և վերջապես, եքսպորտի լայնացման հնարավորությունների վրա։

Ծխախոտի մշակման հողային աշխատանքից սկսած մինչ արդյունաբերությանը հանձնելը, լինում են կորուստներ։ Այս կորուստների դեմ կարելի յե պայքարել այն դեպքում, յերբ աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում դրված է առողջ հիմքերի վրա։ Աշխատանքի կազմակերպման մեջ մեծ դեր է խաղում բրիգադան։ Նախ քան անցնելն այն հիմնական արտադրական աշխատանքներին, վորոնց ընթացքում տեղի յե ունենում կորուստները, կանդ առնենք բրիգադային աշխատանքի կազմակերպման վրա, վորի ճիշտ կազմակերպումից է կախված բերքատվության բարձրացումը, կորուստների դեմ կռվելու և այդպիսին լիկվիդացիայի յենթարկելու հնարավորություններն ու միջոցները։ Բրիգադան, վորը հանդիսանում է ծխախոտագործական կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման հիմնական ողակը, պետք է պայքարի բերքատվության բարձրացման, արտադրության բարձր տեխնիկայի համար, կատարելով և վերակատարելով պլանները քանակապես

և վորակապես, կիրառելով ագրոտեխնիկական մինիմալ միջոցառումները և աշխատանքի կազմակերպման սոցիալիստական մեթոդները։

Կենտկոմի վորոշումը ճիշտ բնորոշում է բրիգադայի դերը, վորը հանդիսանում է արտադրության հիմնական միավորը և կոլխոզնիկների վերադաստիարակության դպրոցը, կոլեկտիվ աշխատանքի հիման վրա։

Ծխախոտի կորուստի դեմ պայքարելու, բարձր բերք և լավ վորակի հումույթ ստանալու համար բրիգադաներում պետք է ստեղծել և պահպանել մշտական կազմ, կցելով նրանց հողամասերին անհրաժեշտ գյուղմեքենաներով, գործիքներով ու քաշող ուժով։ Միայն այսպիսի դեպքում կարելի յե պայքարել բերքատվության և վորակի բարձրացման համար. հետևապես և տեղի ունեցող կորուստների դեմ, կիրառելով ագրոտեխնիկական բոլոր որենքները՝ ծխախոտի մշակության արտադրական զանազան պրոցեսներում։ Ի հարկե, վերը հիշված խնդիրներն այն դեպքում կարող են իրագործվել, յերբ բրիգադան կազմակերպված լինի վոչ թե թղթի վրա, այլ այն հիմունքներով, ինչ վոր ասում է Կենտկոմի փետրվարի 4-ի հայտնի վորոշման մեջ։ Ինչքան բրիգադան մեծ նշանակություն ունի բարձր բերք ստանալու և կորուստների դեմ արմատապես կռվելու, ապա պարզ է բրիգադիրի նշանակությունը, վորպես անմիջականորեն արտադրության կազմակերպչի, վորը մեծ դեր է խաղում կոլտնտեսության սոցիալիստական շինարարության գործում։ Բրիգադիրը, վորպես ղեկավար և պատասխանատու ամբողջ բրիգադայի աշխատանքներին,

վորպես հրամանատար ամբողջ արտադրական աշխատանքների պրոցեսում, ապա նրա ճիշտ ղեկավարությունից է կախված բրիգադայի աշխատանքների վորակային և քանակային ցուցանիշների արդյունքները։

Ծխախոտի լավորակ և բարձր բերքի ստացումը, առաջին հերթին կախված է բրիգադների կազմակերպումից, վորից և բոլոր արտադրական պրոցեսների լավ կազմակերպումը, որինակ՝ ժամանակին կատարելով վարը, շերթիլանոցների վաղ կազմակերպումը, անկումը, քաղը և այլն։ Ահա այս բոլոր աշխատանքների հաջող կազմակերպումը և իր ժամանակին կատարումը կախված է բրիգադիրից։

Բրիգադիրի ընդունակությունից և ձեռներեցությունից են կախված.—

ա) Կոլխոզնիկների ճիշտ դասավորումը աշխատանքի տարբեր պրոցեսներում.

բ) Քաշող ուժի և գյուղ. մեքենա-գործիքների նպատակահարմար օգտագործումը.

գ) Ագրոտեխնիկական ձեռնարկումների լրիվ կատարումը, վորոնք ուղղված են ծխախոտի բերքատվության և վորակի բարձրացման համար և այլն։ Լավագույն բրիգադիրին առաջադրվում են հետևյալ պահանջները՝

1. Բանուժի ճիշտ բաշխումն արտադրական աշխատանքների պրոցեսում.

2. Խմբակների և առանձին կոլխոզնիկների արտադրական առաջադրությունների ճիշտ սահմանումը.

3. Ծխախոտի արտադրության մեջ տեխնիկական և ագրոտեխնիկական պահանջների լրիվ կատարումը.

4. Անցկացնել բրիգադայի անդամների հաշվառում և ստուգում քանակական և վորակական ցուցանիշների նկատմամբ.

5. Բրիգադայի յուրաքանչյուր անդամի աշխատանքի գնահատումը՝ յելնելով նրա աշխատանքի վորակի և արտադրության բարձր ցուցանիշներից.

6. Աշխատանքի գործարքային սիստեմի կիրառումը և աշխատերի ճիշտ դրանցումը.

7. Սոցմրցման և հարվածայնության կազմակերպումը։

Վերոհիշյալ պահանջների ճիշտ կազմակերպումով կարելի է լայն պայքար մղել բարձր բերքատվության, լավ վորակի և հետևապես, ծխախոտի կորուստների դեմ։

Վ Ա Ր Ը.

ա) Քաշող ուժի խնայքը, բ) գյուղ. մեք. ու գործիքների նորոգումը։

Վորպեսզի հնարավոր լինի իր ժամանակին սկսել վարը պահպանելով վարի խորությունը և տեսակը, ապա անհրաժեշտ է ունենալ քաշող ուժ և գյուղ. մեք. ու գործիքներ։ Դժբախտաբար մեր վորոշ կոլխոզներում այդ պատրաստությունը վաղորոք չի կատարվում, վորի հետևանքով վարը վորակով շատ ցածր է լինում, վորը հենց առաջին աշխատանքից (վարից) ազդում է բերքատվության վրա։ Դեռ մինչև հիմա գոյություն ունեն այնպիսի կոլխոզներ, վորտեղ շատ անմխիթար պայմաններում և դրված քաշող ուժի խնամքը, վորից այնքան են ուժասպառ լինում, վոր ի վիճակի չեն լինում աշխատել կամ յեթե աշխատում են, արտադրում են նորմայից քիչ և վորակով վատ (խորությունը և այլն)։

Որինակ՝ որացուցցային պլանով նախատեսնված $^1/_2$ հեկտարի փոխարեն վարում են $^1/_8$ հեկտար, կամ փոխանակ վարելու 18—20 սանտիմետր խորությամբ, վարում են 4—8 սանտիմետր խորությամբ, որն ինքնստինքյան հետագայում ազդումե բերքատվության վրա։ Վորքան բանվոր ծկանի՝ անասունների խնամքն ե վատ հիմքերի վրա դրված, ավելի վատթար դրության մեջ ե գտնվում գյուղ. մեքենաների ու գործիքների խնամքը։ Շատ կոլխոզներում անփույթ վերաբերմունքից փչանում են մեքենաների մասերը, կորուստի յեն մատնվում, կոտրատում և այլն. և այս բոլորից հետո, փոխանակ մեկ ամիս առաջ այս բոլորը նորոգելու և պատրաստելու, նրանք վարի ժամանակ են սկսում կատարել այդ նորոգումները, որն ազդում ե սահմանված ժամկետին վերջացնելու և, բացի դրանից, փոխանակ կատարելու վարի պլանները 100%-ով, կատարում են 20%-ով, որն ազդում և բերքատվության բարձր ցուցանիշների վրա։ Ահա այստեղից պետք ե յեզրակացնել, թե ինչքան մեծ նշանակություն ունի քաշող ուժի և գյուղ. մեքենա-գործիքների խնամքը և ժամանակին պատրաստումը, վարի վորակային և քանակային ցուցանիշների նկատմամբ. այստեղից ել ճիշտ յեզրակացում՝

Վոր քաշող ուժի բավարար խնամքը և գյուղ. մեքենաների ու գործիքների ժամանակին նորոգումն ու պատրաստումն ապահովում են վարը ժամանակին կատարելուն, հետևապես ժամանակին կատարված և վորակով լավ վարը հանդիսանում ե բերքատվության բարձրացման առաջին նախապայմանը, միաժամանակ հանդիսանալով առաջին արդասիքը բերքատվության կորուսանների դեմ կռվելու գործում։

ՍԱԾԻԼԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Շիթիլանոցների տեղի ընտրությունը, նրա վարը, սննդարար նյութերով ապահովումը և այլն անհրաժեշտ միջոցառումները, ինչպես որինակ, ապակիները, ոլիֆը, մեխը և այլն, ջերմոցային շրջանակների վերանորոգումը և ջրային կառուցումները պետք ե կատարվեն աշնանը կամ ծայրահեղ դեպքում վաղ գարնանը։

Շիթիլանոցների պատրաստելը և վաղ ցանելը գրավականն ե բարձր բերքի ստացմանը։ Վաղ ցանելը հնարավորություն ե տալիս սածիլումը կատարելու ժամանակին, որից և կախված ե ապագա բերքի վորակի և քանակի լրիվ ստացումը։ Շիթիլանոցների ուշ կազմակերպումն ու ցանքը, ուշացնում են նաև սածիլումը, որը մեծ կորուստներ ե տալիս բերքի հավաքման ժամանակ, մանավանդ նախալեռնային մասերում, որտեղ մի կողմից աշնանային ցրտերը վրա յեն հասնում՝ ծխախոտի հասունությունը դանդաղեցնում, մյուս կողմից հասունացած ծխախոտները ցրտահարվում են և փչանում։ Այս տեսակետից ցանկալի յե, որ Հայաստանի գոնե նախալեռնային շրջաններն անպայման ապահոված լինեն ջերմոցներով, որով ապահոված կլինենք բարձր բերքի ստացումը։ Շիթիլանոցների տեղի ընտրության ժամանակ պետք ե ուշադրություն դարձնել հետևյալի վրա՝

1. Շիթիլանոցների կազմակերպումը և ցանքը կատարել մեկ հողամասում, որով կհեշտանա ապագա խնամքը, (ջրելը, քաղհանելը և այլն). ցաք ու ցրիվ յեղած մանր շիթիլանոցներում ծախսվում ե կըրկնակի-յեռակի բանուժ, բացի սրանից բարդանում ե շի-

թիլանոցների խնամքը, հետևապես ստացվում է վատաոողջ սածիլներ, որը մեծ ազդեցություն ունի առողջ բերք ստանալու վրա։

2. Շեթիլանոցների տեղը պետք է պաշտպանված լինի քամիներից, հեռու չորանոցներից և ապահովված լինի մոտիկ ջրով։ Մեծ հողամասի վրա կազմակերպված սածիլային տնտեսությունը և ջրի մոտիկությունը հեշտացնում են նաև խնամքը և մի քանի անգամ կրճատում բանվորական ուժի պահանջը, որը դրական նշանակություն ունի կոլտնտեսության աշխատանքների համար։

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՆԱԽՔԱՆ ՍԱԾԻԼՈՒՄԸ ՑԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՍԱԾԻԼՈՒՄԸ.

Ծխախոտի լավորակ և բարձր բերք ստանալու համար, վաղ սածիլումը խոշոր նշանակություն ունի։ Այդ պատճառով անհրաժեշտ է վաղ դարնանը կատարել հողի մշակում նախքան սածիլումն սկսելը, կատարելով կրկնավար 7—10 սմ. խորությամբ, փոցխել, որպիսի աշխատանքները նպաստում են խոնավության կուտակումը հողում—որպիսի հանգամանքը նպաստում է ծխախոտի բարձր բերքի ստանալուն։ Պետք է իմանալ, որ յուրաքանչյուր ուշացած որ բերում է մեզ որոշ մնաս, պակասեցնելով խոնավության քանակը հողի մեջ—հետևապես և իջեցնում բերքատվությունը։ Վերոհիշյալ աշխատանքները կատարելուց հետո, խոկույն և յեթ պետք է սկսել սածիլների տնկումը։ Ցերկար տարիների դիտողություններով ապացուցված է, որ շատ դեպքերում շեթիլների վաղ տնկումը (մայիսի սկիզբին) ունի հույժ կարևոր նշանակություն—լավ որակի և բարձր բերք ստանալու համար։ Բացի այդ,

վաղ շեթիլումը հեշտացնում է նաև ծխախոտի դաշտի հետագա մշակումը (փխրացումը, քաղհանը և այլն)։ Յեթե սածիլների տնկումը ձգձգվում է մինչև գարնան վերջը, ծխախոտը շատ հաճախ չորանում է, որի հետևանքով տնկված սածիլների որոշ մասը փչանում է և այդպիսով պահանջվում նույն տեղում կատարել նորից սածիլների տնկում։ Այդպիսի դեպքերում տնտեսությունը ստիպված է լրացուցիչ բանվոր—ձեռքեր ոգտագործել, որը նրա վրա թանգ է նստում, մյուս կողմից ծխախոտի սածիլների աճումը համաչափ չի կատարվում, հետևապես և հասունացումը միաժամանակ տեղի չի ունենում, որպիսի հանգամանքը բացասաբար է անդրադառնում տնտեսության վրա։

Ծխախոտի սածիլների տնկումը շուտ կատարելու դեպքում զուգադիպում է տարվա այն յեղանակներին, յերբ անձրևները շատ են տեղում, շոգ չի լինում, հետևապես և ջրի կարիք քիչ է զգացվում-սածիլների փչացման տոկոսը քիչ է լինում և չի պահանջվում սածիլների լրացուցիչ տնկում։ Այդտեղից կարելի յե յեզրակացնել, որ վաղ սածիլում կատարելու հետևանքով ծախսերը կրճատվում են, մյուս կողմից ծխախոտի հասունացումը կատարվում է միաժամանակ։ Ուշ սածիլած ծխախոտների հասունացումը (հունիս, հուլիս ամիսներում) կատարվում է վոչ միաժամանակ, որի հետևանքով ծխախոտի տամկացումը և չորացումն ընկնում է աշնան անձրևային յեղանակներին, որպիսի դրությունը բացասաբար է անդրադառնում ծխախոտի վրա ու ստացվում ցածր որակի բերք։

Վաղ սածիլած ծխախոտների տամկացումը, չորացումը տեղի չեն ունենում յեղանակների բարենպաստ պայմաններում, վորի հետեվանքով եկ ստացվում են բարձր վորակի ծխախոտներ։

Ուշ սածիլած ծխախոտները շատ հաճախ տուժում են ջասատուներից և հիվանդություններից ու աշնան սառնամանիքներից—միայն այն պատճառով, վոր տնտեսությունը հնարավորություն չի ունենում ծխախոտի բերքահավաքը կատարել ժամանակին։ Յերբեմն լինում են դեպքեր, յերբ սառնամանիքներից բերքի վորոշ մասը փչանում է. իսկ հիվանդությունների և ջասատուների հասցրած ջասվածքների պատճառով, ծխախոտն արդյունաբերության համար դառնում է անպետք. այստեղից եկ առաջանում է ծխախոտի վորակական ու քանակական կորուստ։

Ծխախոտի սածիլումը վաղ կատարելու դեպքում հավարյա թե ծխախոտը չի յենթարկվում ջասատուների և հիվանդությունների, իսկ յեթե տուժում է, շատ չնչին տոկոսով. այստեղից պետք է յեզրակացնել վոր՝

ա) Վաղը սածիլումը տնտեսության վրա եժան է նստում, ստացվում է լավ վորակի և բարձր բերք, քան թե ուշ սածիլելը.

բ) Սածիլների զարգացումը կատարվում է ժամանակին և համաչափ.

գ) Ծխախոտի բերքը չի տուժում ջասատուներից, հիվանդություններից և սառնամանիքներից։

Վերը հիշվածները գալիս են ասելու, վոր վաղ սածիլման դեպքում ծխախոտի կորուստներ համարյա թե տեղի չեն ունենում, մյուս կողմից ստացվում է լավորակ և լրիվ բերք։

ՄԻՋՇԱՐՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՅԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ.

ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԴԱՇՏՈՒՄ

Ինչպես մյուս բույսերի, նույնպես և ծխախոտի աճման և զարգացման համար անհրաժեշտ է լույս, ջերմություն, խոնավություն և ոդ։

Վորպեսզի վերոհիշյալ պահանջները բավարարվի, պետք է շատ լուրջ ուշադրությամբ կատարենք ագրոտեխնիկական բոլոր միջոցառումները, վորով և հնարավորություն կտանք ստեղծելու բույսի աճման և զարգացման համար նորմալ պայմաններ։ Այդ ագրոձեռնարկումները հետեվյալներն են՝

ա) Մաքրել ծխախոտի դաշտը մոլախոտերից.

բ) Փխրացում.

գ) Բուգ տալ.

Ծխախոտն, ինչպես իր աճման և զարգացման ընթացքում, նույնպես և հասունացման շրջանում, պետք է զերծ լինի մոլախոտերից։ Վերջիններս նախ մեծ չափով խլում են հողից սննդարար նյութերը և այդպիսով պակասացնում ծխախոտի սննդարար նյութերի քանակը ու դանդաղեցնում նրա նորմալ աճումը, մյուս կողմից նրանք քամիների միջոցին մեխանիկական ջլաս հասցնում ծխախոտի բույսին։ Բացի դրանից մոլախոտերը պատճառ են դառնում զանազան տեսակի հիվանդությունների և ջասատուների առաջացման, վորոնք այս կամ այն կերպ ջլասելով ծխախոտին, իջեցնում են նրա վորակական ու քանակական ցուցանիշները

Վերոհիշյալ թերությունները կանխելու համար անհրաժեշտ է ժամանակին կատարել հողի փխրացումը և այդպիսով վոչնչացնել բոլոր մոլախոտերը։

ՀՈՂԻ ՓԽՐԱՑՈՒՄԸ.

Ծխախոտի սածիլները տնկելուց յետոյ շարաթից հետո պետք է կատարել հողի փխրացում վոչնչացնելով բոլոր մոլախոտերը, այդպիսով ստեղծել նորմալ պայմաններ հողում խոնավություն կուտակելու համար։ Այն կոլտնտեսությունները և մենատնտեսները, վորոնք ժամանակին չեն կատարում այդ գործողությունները, նրանք դանդաղեցնում են ծխախոտի աճումը և զարգացումը, հետևապես ձգձգում նրա հասունացումը՝ իջեցնելով վորակը և քանակը։ Հասունացումն ուշանալու հետևանքով շատ հաճախ աշնան որերին վրա յին հասնում ցրտերը, վորի հետևանքով բերքի մի մասը մնում է ձյունի տակ, վորը վորակապես շատ ցածր է սովորական ծխախոտից, և քանակով քիչ։

ԾԽԱԽՈՏԻ ԲՈՒՅՍԻ ԲՈՒԳ ՏԱԼԸ.

Ծխախոտի բույսի բուգ տալը նույնպես խոշոր նշանակություն ունի նրա նորմալ աճման և հասունացման համար։ Այդ գործողությունը փխրացնում է հողի շերտերը և հնարավորություն է տալիս բույսի արմատային սիստեմի ուժեղ աճման, ծխախոտի նոր տերևների առաջացման, վորը բերքի հավելման տեսակետից շատ մեծ նշանակություն ունի։

Վերեվ թված յերեք միջոցառումները ժամանակին և կանոնավոր կատարելու դեպքում, մենք դրանով պայքարում ենք ծխախոտի կորուստների դեմ և ստանում բարձրակ և քանակապես բարձր ծխախոտի բերք։

ԾԵՐԱՏՈՒՄ ՑԵՎ ԲՋԱՏՈՒՄ, ԿԱՄ ԾԱԽԿԱՀԱՏՈՒՄ ՑԵՎ ՖԻԼԻՋԱՀԱՏՈՒՄ

Ծաղկահատման և ֆիլիչահատման աշխատանքներին անհրաժեշտ է դարձնել լուրջ ուշադրություն, քանի վոր անժամանակ և սխալ կատարելով այդ գործը, առաջացնում է մեծ տոկոս կորուստ, ինչպես բերքի մեջ, նույնպես և ապրանքային տեսակների մեջ։ Այդ միջոցառումները գիտակցորեն և գործնական կերպով կատարելու համար անհրաժեշտ է անպայմանորեն ծանոթ լինել դրանց թեորետիկ նշանակությանը, քանի վոր մի ընդհանուր ձևով չի կարելի կատարել ծաղկահատումը և ֆիլիչահատումը, վորովհետև մի կողմից տվյալ շրջանի ծխախոտի արդյունաբերության պահանջները, մյուս կողմից հողային բաղմազանությունը չեն թույլատրում այդ միջոցառումները միաժամանակ և միաձև կատարելու։

Չծաղկահատած և չֆիլիչահատած ծխախոտի տերևները նորմալ կերպով չեն զարգանում, վորովհետև սննդարար նյութերը գնում են սերմերի և ֆիլիչների (բջիջ) կազմակերպմանը։ Հետևապես այստեղից պարզ է, վոր բերքը իջնում է, բացի դրանից ծխախոտը չի ստանում այն վորակական հատկությունները, վորպիսին պահանջում է ծխախոտի արդյունաբերությունը։ Այն նյութերը, վորոնք ծխախոտին տալիս են լավ հատկություն և բարձրացնում նրա վորակը, առաջանում են ծաղկման սկզբում։ Ծաղկահատում չկատարելու դեպքում այդ թանկարժեք նյութերը անցնում են ծաղկի մեջ, իսկ յեթե ծաղկահատում կատարվում է, այն դեպքում այդ նյութերը բաշխվում են ծխախոտի մնացած տերևների

մեջ, վորի հետեվանքով վերջիններս ուժեղ սկսում են աճել։ Խոշոր ֆիլիչները ծախսում են ածխաջրատներ իսկ մանր ֆիլիչները իրենց զարդացման համար ծախսում են սպիտակուցային նյութեր։ Այդպիսով խոշոր նշանակություն ունի ժամանակին և ճիշտ ծաղկահատում ու ֆիլիչահատում կատարելու գործողությունը կորուստների դեմ պայքարելու տեսակետից։ Ծաղկահատում կատարելիս, առանձին ուշադրություն պետք է դարձնել աշխատանքի ժամկետների վրա այն է՝

ա) Վաղ ծաղկահատումը, վորը կատարվում է ծաղիկների առաջացման ժամանակ և ժամանակին հեռացնելով մանր բջիջը ստացվում է բարձր բերք—սակայն վատ հատկությամբ և վատ այրվելու ընդունակությամբ—այստեղից ել ծխախոտի վորակի կորուստ Այսպիսի ծաղկահատումը և ֆիլիչահատումը կարելի յե կատարել թույլ հողերի վրա։

բ) Ուշ ծաղկահատումը, վորը կատարվում է սերմերի արկղիկների կազմակերպման միջոցին՝ հեռացվելով միայն խոշոր բջիջը ստացվում է ցածր բերք, սակայն սպիտակուցային մասերով քիչ, իսկ ածխաջրատներով հարուստ։ Այստեղից վորակական ցուցանիշի բարձրացում, միաժամանակ ծխախոտի բերքի իջեցում։

գ) Հարուստ հողերում կարելի յե ծաղկահատում չկատարել, հակառակ դեպքում այդպիսին կատարել սերմերի արկղիկների հասունացման միջոցին, այն ել 1—2 տերեվ։ Ֆիլիչների զարդացում թույլատրվում է, սակայն նրանց յերկարությունը չպետք է ավելի լինի 10 սանտիմետրից, վորից հետո այդպիսիք հեռացվում են։

Եթե շատ հարուստ հողերում կատարվի վաղ ծաղկահատում, այն դեպքում ծխախոտը ստանալով ուժեղ սնունդ, ստացվում է կոպիտ և ցածր վորակի ծխախոտ։

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԸ

Կորուստների տեսակետից ծխախոտի բերքահավաքը (քաղը) խոշոր դեր է խաղում։ Անժամանակ և սխալ աշխատանք կատարելիս, մեծ չափով ընկնում է բերքը, ինչպես վորակապես, նույնպես և ծխախոտի տեսակների նկատմամբ։ Ծխախոտի քաղը կատարվում է տերևների տեխնիկական հասունության շրջանում և վոչ մի դեպքում չի թույլատրվում քաղը կատարել շատ հասած կամ չհասած վիճակում։ Ծխախոտի տերևների հասունացումը կատարվում է աստիճանաբար ոկսած ներքևի տերեվներից, դրա համար ել քաղը կատարում է աստիճանաբար։ Չհասած վիճակում քաղած ծխախոտը պահանջում է մեծ ուշադրություն տամկացման համար և ընդհանրապես տամկացման ընթացքը դառնում է դժվարին։ Այս դեպքում չորացնելուց հետո ստացվում է քաշով թեթև հումք։ Ծխախոտի հասունությունն անցած վիճակում քաղելիս ստացվում է քաշով թեթև, դաղարկ ծխախոտ, այդպիսով ընկնում է նրա լավ հատկությունները։

Բարձր վորակ ծխախոտ ստանալու համար (արոմատ, վառվելու ընդունակություն, գույն և այլն) քաղը պետք է կատարել միայն տերեվների տեխնիկական հասունացման միջոցին։ Քաղը պետք է կատարվի վաղ առավոտյան և յերեկոյան, վոչ մի դեպքում չի թույլատրվում քաղը կատարել որվա շող յեղանակին, վորովհետև այդ ժամանակ տերեվները լինում են թա-

ռամած, վորի հետեվանքով դրանք կպչում են միմիանց, կցվում և խիստ տաքանում կույտերի մեջ, վորի հետևանքով ծխախոտի հատկությունը իջնում է։

Տերեվները չի կարելի քաղել անձրևից հետո, նույնպես և յերբ նրանք ծածկված են յեղյամով, վորովհետև թաց տերևները կույտերով տաքանում են, դժվարությամբ չորանում—այդպիսով ապականում և նրա հատկության, նույնպես և բերքի քանակի դրա։ Դաշտից ծխախոտը չորանոցները փոխադրելու միջոցին բռնելու և դաղարկելու վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել և այդ աշխատանքները կատարել զգուշությամբ առանձնապես ծխախոտը միմիանց վրա դասավորելու ժամանակ, քանի վոր ծխախոտի տերևների անկանոն դասավորումը ջնջում է տերևների մեծ մասը, վորի հետեվանքով նրանք սեվանում են և ստացվում է ցածր վորակի ծխախոտ։ Վերոհիշյալ թերությունները տեղի չտալու համար, անհրաժեշտ է տերևները դասավորել կոթերով պատի կողմը, վորովհետև յեթե կոթունները շփվեն տերևների հետ վերջիններս կարող են ջնջվել, վորի հետեվանքով և առաջանում է կորուստ։ Ծխախոտի բերքահավաքի ընթացքում աշխատավոր ձեռքերը պետք է այնպես դասավորել, վորպեսզի աշխատանքի զանազան պրոցեսներում աշխատող բանվորների գործողությունները կատարվեն համաչափ, ծխախոտը տեղում չմնալու և փչացման չյենթարկելու տեսակետից։

ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ.

Ծխախոտը հասակն առած վիճակում կարկտահար յենելու դեպքում բերքատվությունը հնարավոր է նորից բարձրացնել, կտրելով ծխախոտի ցողունը թողնելով միայն յերկու ֆիլիչ։ Այդ գործողությունից հետո նրա խնամքը կատարվում է սովորական ձևով։ Վերոհիշյալ միջոցը կիրառվում է այն դեպքում, յերբ ծխախոտի տերևների վնասվածք բարձր կլինի 80 տոկոսից։

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՑՈՂՈՒՆԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ.

Հայաստանի պայմաններում ծխախոտի բերքահավաքը ցողունների հետ միասին չի գործադրվում։ Ծխախոտի բերքահավաքը ցողունի հետ միասին թույլատրվում է միայն հետևյալ դեպքում՝

ա) Ծխախոտի ստծիլումը ուշ կատարելու հետևանքով, յերբ հասունացումը ձգձգվում է և սպասվում են ուժեղ սառնամանիքներ, բացի այդ, յերբ տնտեսության մեջ զրաղվում է՝աշխատավոր ձեռքերի պակաս վորի հետևանքով բերքահավաքը չի կարող կատարվել ըստ առանձին քաղերի։

բ) Զորային ամառվա դեպքում, յերբ դանդաղում է ծխախոտի զարգացումը և ստացվում է ցածր թփեր, այդ դեպքում թույլատրվում է բերքահավաքը կատարել ցողունի հետ միասին, վորովհետև առաջին քաղերի հասունացումը յերաշտի հետևանքով համարյա թե լինում է միաժամանակ։ Ցողունային բերքահավաքի դեպքում անպայմանորեն պետք է կատարել ծաղկահատում, իսկ ֆիլիչահատում կատարվում է ֆիլիչներ առաջանալու դեպքում։ Ֆիլիչահատման և ծաղկահատման բացակայության դեպքում տերևների հասունացումը դանդաղում է և ծխախոտը ստացվում է ցածր վորակի։

գ) Ուժեղ տարերային վնասվածքների դեպքում, յերբ վնասվածները հասնում են խոշոր չափերի՝ 70—90 տոկոս։

ԾԽԱԽՈՏԻ ՇԱՐԵԼԸ.

Ծխախոտի շարելը չափազանց լուրջ աշխատանք պահանջող գործողություն է և պահանջում է լավագույն ուժեր։ Ծխախոտը շարելու ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրների վրա՝

ա) Տերևների խոնավության աստիճանի վրա, բ) տերևների տեսակների վրա և գ) շարքերի խտության վրա (շարված տերևների խտությունը)։

Խոնավ տերևները պետք է անմիջապես շարել, վորովհետև այդպիսի տերևները յերկար մնալուց անմիջապես փչանում են, առանձնապես, յեթե տերևի հյուսվածքները շատ նուրբ են (բարձրորակ ծխախոտներ)։ Տերևները թաց վիճակում քաղելիս իջնում է ծխախոտի թե վորակը և թե քանակը։

2. Ծխախոտը շարելու ժամանակ անհրաժեշտ է անպայմանորեն կատարել տերևների տեսակավորում, յելնելով նրանց հասունությունից, տերևների չափից դուրս դունավորումից, վնասվածների չափից և այլն։ Ծխախոտի տերևները տեսակավորման չենթարկելու դեպքում, շարելը դժվարացնում են հետագա աշխատանքները և զգալիորեն վատացնում ծխախոտի հատկությունը։ Յերբ ծխախոտն առանց տեսակավորվելու յե շարվում, այն դեպքում չորացումը կատարվում է անհամաչափ, վորովհետև մեկ կողմից ավելի խոշոր տերևները ծածկում են փոքր տերևներին, վորի հետևանքով վերջիններս չորանում են անհամաչափ, մյուս կողմից խոշոր տերևների յեզրերը, վորոնք դուրս են ընկած, ուժեղ չորանում են և առաջացնում վորակի մեջ կորուստ։

3. Շարանը պետք լինի հավասար և պահանջվող խտություն։ Շարանների խտությունը տարբեր է բատանիկական տարբեր տեսակների համար։ Նոսր շարելու դեպքում տերևները չորանում են չընդունելով պահանջվող դեղին գույնը, իսկ խիտ շարելու դեպքում չորացումը կատարվում է աննորմալ, առանձնապես դանդաղ է չորանում գլխավոր ջղերը։ Նոսր շարը պետք է կատարել խոշոր տերևներ ունեցող տեսակների համար, իսկ մանր տերևներ ունեցող տեսակների նկատմամբ թույլատրվում է քիչ խիտ, վորով հնարավորություն է տրվում չհասունացած ծխախոտի ճիշտ տամկանալը։ Ավելի խիտ շարելը թույլատրվում է մանր տերև ունեցող ծխախոտների համար, վորոնք աճել և հասունացել են չոր յեղանակներին առանձնապես, յեթե դրանք պետք է յենթարկվեն կրակային չորացման։ Յեթե տամկացումը կատարված է մինչև շարելը, այն դեպքում շարելը պետք է կատարվի ավելի նոսր։

Վերոհիշյալ պահանջները հետապնդելու դեպքում ծխախոտի վորակական ցուցանիշները բարձրանում են։

ԾԽԱԽՈՏԻ ՏԱՄԿԱՑՈՒՄ

Ծխախոտի տամկացումը կայանում է նրանում, վոր ծխախոտի տերևները նախքան չորացումն իրենց կանաչ գույնը փոխում են դեղին գույնի։ Ամենալավ և գործածելի տամկացման միջոցն այն է, վոր այդ գործողությունը կատարվում է շրջանակների վրա.

տամկացում կատարվում է չորանոցում։ Եթե չորանոցում բավարար աստիճանի ջերմություն չկա, այն դեպքում շրջանակները դուրս է բերվում արեգակի տակ, իսկ յերեկոյան նորից տեղավորում են չորանոցում։

Տամկացումը կատարվում է հատակի վրա։ Վորպեսզի ծխախոտը հատակին չկեղտոտվի, անպայմանորեն հատակին պետք է փռել բրեզենդ, ծղնոտ և այլն, վորից հետո տերեվները բարակ շերտերով փռել բարձրությամբ 15—20 սանտիմետր։ Նկատի ունենալով վոր այդ ձեվով ջերմության կանոնավորումը համեմատած նախորդ ձեվի հետ դժվարանում է, այն դեպքում աննորմալ խնամքը տալիս է զգալի կորուստ վորակի մեջ, այդ ձեվը կիրառելի չէ։ Տամկացման միջոցին չորանոցը պետք է պատսպարված լինի քամիներից։ Վորպիսզի տամկացումը կատարվի ճիշտ, պահանջվում է վորոշ ջերմաստիճան, վորովհետև բարձր ջերմաստիճանի դեպքում ծխախոտի տերեվներն արագորեն չորանում են, հետեվապես կորցնում են մեծ քանակությամբ ջուր, վորն իր հերթին վորակի կորուստ է։ Շատ ցածր ջերմաստիճանի դեպքում ջրի կորուստն ընթանում է շատ դանդաղ, վորի հետեվանքով կրկին առաջանում է վորակի մեծ կորուստ։

Տերեվների տամկացման ժամանակ, վոչ մի դեպքում չի կարելի տալ լրիվ և վերջնական դեղնացում, վորովհետև վերջնական տամկացումը կատարվում է ծխախոտի չորացման և խմորման ժամանակ։ Այլ կերպ չորացման ժամանակ արագորեն ծխախոտը չորանում է, չտանալով 100 տոկոսային լրիվ չորացում։ Տամկացման ընթացքում պետք է ստեղծել քաղ կատարողնե-

րի մեջ համաչափ գործողություն, վորովհետև յեթե քաղող բրիգադան հավաքում է շատ, քան թե շարողները կարող են շարել, այդ դեպքում հավաքված ծխախոտը կուլտերով ծռում է մի քանի որ չորանոցի մեջ և ուժեղ տաքանալով առաջացնում է կորուստ։

ԾԽԱԽՈՏԻ ՉՈՐԱՑՈՒՄԸ

Բարձր վորակի ծխախոտ ստանալու համար, չորացման ընթացքում պետք է կիրառել բոլոր պահանջվող ագրոտեխնիկական որենքները։ Ծխախոտի չորացումն իրենից ներկայացնում է չափազանց պատասխանատու մի գործողություն։ Ծխախոտի մշակման և լավ չորացման գործողությունից կախված է բարձր վորակի և լավ տեսակի ծխախոտներ ստանալը։ Չորացման նշանակությունը կայանում է նրանում, վոր խոնավությունը տերեվի միջից հեռացնելու միջոցով տրվում է նրան դեղին գույն, վորը նա ստացել է չորացման նախնական շրջանում, վորպիսի հանդամանքը խոշոր նշանակություն ունի ծխախոտի համար։

Ծխախոտի չորացումը կատարվում է յերկու ձեվով՝

1. Արեգակային չորացում, 2. կրակային չորացում։ Հիմնական չորացման ձեվը, վորի միջոցով ստացվում է բարձր վորակի ծխախոտ, դա արեգակային չորացումն է։ Արեգակային չորացման ժամանակ պահանջվում է կիրառել հետեվյալը՝

ա) Չորանոցի տարածությունը պաշտպանված պետք է լինի քամիներից և սկվոզնոյից, հակառակ դեպքում ծխախոտը կչորանա կանաչ վիճակում, չբ-

տանալով ցանկալի դեղին գույնը։ Ցերբեմն ել ուժեղ քամիներից տերեվները կարող են պատառոտվել, վորի հետեվանքով իջնում է ծխախոտի վորակական և քանակական ցուցանիշները։

բ) Համաչափ չորացում կատարելու համար, անհրաժեշտ է տերեվների միատեսակ տամկացում։

գ) Համաչափ չորացում կատարելու համար, անհրաժեշտ է ծխախոտի բատանիքական միեվնույն տեսակներ և միևնույն քաղեր։ Զանազան տեսակները և այլ քաղերը տալիս են ցածր վորակ ծխախոտ (տերեվների կոպտությունը, քնքուշությունը, տերեվների չափը և այլն)։

դ) Չորանոցում շրջանակները չպետք է իրար վրա ընկած լինեն, վորովհետև դրանից առաջանում է ողի աննորմալ շարժում, իսկ յերկրորդ՝ իրար շփվելով առաջանում է տերեվների մեջ ճաքվածքներ։

յե) Ծխախոտի չորացումը վերջացված է համարվում, յերբ վերջնականապես չորանում է նրա ճղերը և կոթունները։ Վերոհիշյալ պայմանները չկիրառելու դեպքում առաջանում է խոշոր կորուստ, ինչպես ծխախոտի վորակի, նույնպես և քանակի մեջ։

ԿՐԱԿԱՅԻՆ ՉՈՐԱՑՈՒՄ.

Այս ձեվի չորացումն ավելի հետ է մնում արեգակային չորացումից, Հայաստանի պայմաններում կրակային չորացումը չի տարածված։ Դա բացատրում է նրանով, վոր մեղանում ամառվա տեվողությունը շատ յերկար է և արեգակի ազդեցությունը ուժեղ՝ ժամանակին ծխախոտը չորացնելու համար։ Լավորակ ծխախոտները չորացվում են արեգակի տակ կամ

թե չե խառը ձեվով (կամբինիրոված)։ Այդ դեպքում սկզբում ծխախոտը չորանում է արեգակի տակ, իսկ հետո լրիվ չորացում տրվում է կրակային չորանոցի միջոցով։ Կրակային չորանոցում լայն կերպով կիրառվում է ոչն շրջաններում, վորտեղ ամառվա տեվողությունը կարճ է և արեգակի եներգիան անբավարար է ծխախոտը ժամանակին չորացնելու համար։ առանձնապես յերբ ծխախոտը ուշ է սածիլված։

Ծխախոտը կրակային չորացման յենթարկելու դեպքում անհրաժեշտ է կիրառել հետեվյալը։—

ա) Նախքան ծխախոտի նոր պարտիա լցնելը կրակի չորանոցի մեջ, անհրաժեշտ է այդտեղից նախորդ հավաքել նախորդ չորացումից մնացած ծխախոտի բոլոր մնացորդները։

բ) Նախքան չորացման պրոցեսն սկսվելը, յերբ ծխախոտները բարձվում են չորանոցի մեջ, անհրաժեշտ է պաշտպանել ծխախոտներն ողի այլ հոսանքներից (լուսամուտ, ճեղքեր և այլն)։ Բացի վենտիլացիոն ձեվից, մնացած բոլոր հոսանքներն ազդում են ծխախոտի վորակի վրա։

գ) Կրակային չորացման ժամանակ չի թույլատրվում ջերմաստիճանի և խոնավության անկումը նույնպես և թռիչքները, վորոնք ուժեղ կերպով ազդում են ծխախոտի վորակի վրա։ Մինչև վոր ծխախոտի տերեվը լրիվ չափով չչորանա, ջերմաստիճանի բարձրացումը 45—50 աստիճանից բարձր չի թույլատրվում, քանի վոր առաջանում է ծխախոտի տերեվի այրում։ Ծխախոտի տերեվի չորանալուց հետո ջերմաստիճանի բարձրացումը թույլատրվում է մինչև 55—60 աստիճանի ցելսի, ծխախոտի ջղերի չորացման համար։

Վերոհիշյալ պահանջները չկիրառելու դեպքում կրակային չորացման ժամանակ առաջանում են ծխախոտի զգալի կորուստ։

ԾԽԱԽՈՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ծխախոտը չորացման պրոցեսն անցնելուց հետո, պետք է նրան լավ պահպանել։ Պահպանումը կատարվում է հավանդներով։ Ծխախոտի պահպանման համար հատուկ պահեստների բացակայության դեպքում թույլատրվում է ծխախոտը պահպանել ամբարների մեջ, որոնք պետք է պաշտպանված լինեն քամիներից և անձրևներից։

Ծխախոտի պահպանման ժամանակ անհրաժեշտ է կիրառել հետևյալ պահանջները՝

1. Այն շենքը, որտեղ պահպանվում է ծխախոտը պետք է լինի առանձնացված և պաշտպանված մթնոլորտային աղդեցություններից, ինչպես որինակ՝ խոնավություն, ջերմություն, քամիներ և այլն։

2. Հավանդների մեջ ծխախոտը պետք է լինի քիչ խոնավ, սակայն վոչ թաց դրության, ըստ որում հավանդները պետք է տեղավորվեն խիտ։ Ծխախոտն այս ձևով պահպանելիս բարձրանում է նրա վորակը և լավանում գույնը։

3. Ցերը հավանդները նոսր են դասավորված կամ թե շենքը բավարար չափով պաշտպանված չէ արտաքին ներգործություններից, այն դեպքում խոնավ ոդից ծխախոտը թացանում է, կարմրում մինչև անգամ բորբոսնում, որի հետևանքով ստացվում է չափազանց վատ վորակ ծխախոտ։

4. Զոր յեղանակներին ծխախոտն ավելի շատ է

չորանում քան պետք է, որը և անդրադառնում է նրա վորակի վրա։ Վերոհիշյալ թերություններից խուսափելու համար խոնավ յեղանակներին շենքը պետք է ամուր փակված լինի, իսկ չոր յեղանակներին ծխախոտի շենքն անհրաժեշտ է հովացնել։

5. Ծխախոտները պետք է պահվեն հատուկ պահեստներում, որոնք ունեն տախտակած արտատոր և չոր հատակ, որովհետև այն շենքերը, որոնց տանիքը ծածկված են կղմինդրով խոնավ յեղանակներին ծխախոտը թացանում է մինչև անգամ բորբոսնում։ Թիթեղով ծածկած տանիքներն ուժեղ արդյունքի տակ խիստ ջերմություն են կլանում չորացնում ծխախոտի տերևները, որը հեշտությամբ կորատվում է։ Ծխախոտի պահպանումը այդպիսի շենքերում և նշված պայմաններում տալիս է զգալի չափով կորուստներ։

ԾԽԱԽՈՏԻ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՓՆՋԱՎՈՐՈՒՄ.

Փնջավորման ընթացքում կորուստներ չունենալու համար անհրաժեշտ է կատարել ճիշտ տեսակավորում. փնջավորման ժամանակ պետք է նկատի առնել հետևյալը՝

1. Ծխախոտի փնջավորումը պետք է կատարել ըստ քաղերի տեսակների և չորացման ձևի (արհեստական կրակային չորացում է նախատեսվում, թե կրակային)։

2. Չի թույլատրվում խոնավ և հիվանդ տերևներն առողջների հետ միատեղ փնջավորել։

3. Փնջավորման ժամանակ անհրաժեշտ է տեսակավորում կատարել կիսաչոր տերևների հետ միասին։ Հիշյալ պայմանները չկիրառելու դեպքում առաջանում է զգալի կորուստ։

«Ազգային գրադարան»
NL0293359

301/1583
18299